

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԿԻՆ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայնի դրկի հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿ, ԼՐԱԳՐՈՑ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐՈՒԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խոսքագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն յրկուր եւ յարմար դաստիարակ-
ները միայն կը հրատարակուին անբող-
ջովիս կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԻՆՔՆԱՍՓՈՓՈՒՄ

Այս բառը շատ յեղեղեղեղեղ
մեր յեղափոխական ձախորդու-
թիւններէն և հայկական կոտո-
րածներէն յետոյ ու ծափահար-
ւեցաւ շատ խոհուն գլուխներէ:
Արդարեւ ինքնամփոփումը ազգին
մեծագոյն պահանջն է այսօր: Հա-
յաստանի մէջ ամեն դասակարգ և
գրեթէ ամեն անհատ իր բարոյա-
կան բոլոր ուժերը և նիւթական
երբեմնի բարգաւաճ կացութեան
բեկորները հաւաքելու պէտք ու-
նի, վերստին ընկերական գոնէ ա-
մենահամեստ գերք մը տակաւ գը-
րաւել կարենալու համար: Ազգ-
վարչութիւնները գիշերը ցորեկին
հետ խառնելու պարտաւոր են ջա-
նալու համար որ հրկիզեալ եկե-
ղեցիները, աւերակ դպրոցները և
կիսափուլ վանքերը վերականգնին
ու բարգաւաճին: Այս ամենէն զատ
ու թերեւս ամենէն աւելի մեծ հոգ
մըն ալ կը ծանրանայ կեդրոնա-
կան և գաւառական վարչութեանց
և անհատական բարեգործութեան
վրայ: որբերը:

Գաղթականութեան այն մասը,
որ վերջնականապէս հաստատուե-
ցաւ արտասահմանի մէջ, ստիպ-
ուած է նոյնպէս իր բոլոր ուժեր
ամփոփելով ջանալ հասնելու իր
անմիջական նպատակին որ է օտար
և քիչ կամ շատ զարգացած մի-
ջավայրի մը մէջ նիւթական կեան-
քի պայքարը յաջողութեամբ մղե-
լու կարող ըլլալ:

Եթէ սակայն ինքնամփոփումը
բաւով այսչափ միայն պիտի հաս-
կնանք, անոր իմաստին չըջնա-
կէն դուրս կը մնայ արտասահմա-
նի հայութիւնը, որ ոչ քանդուած
եկեղեցի ունեցաւ, ոչ աւերած
դպրոց, ոչ կողոպտուած հարստու-
թիւն և ոչ իրենց բնական պաշտ-
պաններէն զրկուած որբեր: Իր
կացութիւնը նոյնն է այսօր ալ
ինչ որ էր կոտորածներէն առաջ:
Բայց այն ինքնամփոփումը, որուն
պէտք ունինք, պէտք է ըմբռնել
աւելի լայն և շինող նշանակու-
թեամբ որ ընդգրկէ հայ ազգին
ամեն մասերը, հայաստանի և ար-
տասահմանի մէջ, անոր ամեն դա-

սակարգերը, ամեն խաւերը, ամ-
բողջ հայութիւնը:

Ինքնամփոփումը նշանակելու է
մեզի համար ոչ միայն ցրուած ու-
ժերու վերստին հաւաքումը, կո-
րուստներու դարմանումը, այլ և մօտ
կէս դարէ ի վեր սկսած բարոյա-
կան վերաշինութեան յարատեւու-
թիւնը նոր սղողութեամբ, համա-
ձայն վերջին տարիներու աղետալի
փորձառութեան, որուն փրկարար
դասերը մեր առջեւ կը պատկե-
րացնէ լուրջ մտամփոփումը:

Միտք չունինք այստեղ կրկնե-
լու մանրամասնորէն բարեօրոշմի
անհրաժեշտապէս կարօտ մեր այն
թերութիւնները, զորս մեր դժ-
բաղդութիւնները ակնյայտնի ե-
րեւան բերին: Մէկ խօսքով՝ կըր-
նանք ըսել թէ լուրջ կըրթութիւն
մը բարոյական հաստատուն հիմե-
րու վրայ մեր ամենէն զգալի պէտ-
քը կրնանք նկատել: Ահա խնդիր
մը, կըրթական գործին մէջ նպա-
տակարար նոր ուղղութիւն մը
մտցնելու խնդիրը, որով զբաղե-
լու է ամեն հայ ուր որ ալ գըտ-
նուի:

Ինքնամփոփումը ընդգրկելու է
նաեւ և մանաւանդ յեղափոխական
գործունէութիւնը: Սա ալ իր ցը-
րուած ուժերը տակաւ ամփոփելու
ջանալէ զատ, պարտական է փոր-
ձառութեանն օգտուելու առաքի-
նութիւնը ցոյց տալ: Ոչ մի յե-
ղափոխական կարող է ուրանալ թէ
ահագին թերութիւններ ու սխալ-
ներ գործուեցան: Ազգ. ինքնա-
մփոփման մէջ կը հասկնանք զա-
նոնք ալ ուղղելու և դարմանելու
յուսատու ջանքերը:

Չափազանց ուրախ ենք որ, ե-
թէ մեզի հասած տեղեկութիւններ
ստոյգ են, մեր յեղ. կազմակերպու-
թիւններ այս ոչ միայն զգացած,
այլ և սկսած են հետեւել գործու-
նէութեան նոր եղանակներու, զորս
թեւադրած են իրենց փորձառու-
թեան դասերը:

Եթէ ջանանք միահամուռ ա-
նոնցմէ օգտուել, հաւանօրէն այս
ջանքերուն մէջ ազգին ինչ ինչ ան-
ջատ, երկպառակեալ մասերը զի-
րար պիտի գտնեն և իրարու պի-
տի հանդիպին նպատակին տանող
ճամբուն վրայ:

Այս պարագային մէջ, երբ մա-
նաւանդ մանուկ սերունդին դաս-
տիարակութիւնն ալ մեծագոյն խը-
նամքով մը շրջապատուի, դիտակ-
ցական ինքնամփոփումի մը ամեն
արդիւնքները ապագային մէջ լի
ու լի վայելելու հաստատ յոյսը կըր-
նանք ունենալ:

ՅՈՒՍԱՀԱՏՆԵՐԻՆ

(Ճանապարհորդական սպարորութեանց
սակ):

Ո՛չ, պարոններ, ոչ. Յեղափոխու-
թիւնը խաղ չէ եւ ոչ էլ հանաք: Յե-
ղափոխութիւնը, ազգի մը յեղաշրջման
նուիրական գործը, ոչ քանի մը օր-
ուան, ոչ քանի մը տարուան եւ ոչ էլ
քանի մը մարդկանց գործ է:

Շատերը գուցէ այնպէս էին կարծու-
թէ մի քանի ցոյցեր, միջանի հայդու-
կային կռիւներ եւ միջանի հազար ոս-
կիներ Հայաստանը պիտի փրկեն, եւ
երբ տեսան թէ այդ գործերով Հայաս-
տանի փրկութիւնը չեղաւ կամ առժա-
մայեւ ուշացաւ, այլ եւս յուսահատուել
սկսեցին. ոմանք յեղափոխականաց ըս-
կեցին հայոցը, ոմանք ալ յեղափո-
խութեան, ոմանք եւրոպական ամուլ
տիպումներին, մի դասակարգն էլ
այս կամ այն կուսակցութեան:

Սկզբից երբ Հայերս Յեղափոխական
փրկաւէտ ուղիի վրայ ոտք դրինք,
պէտք էր գիտնայինք շատ լաւ թէ
փշալից, տատաակոտ է մեր ուղին, շա՛տ
եւ շա՛տ զոհեր է պահանջում մեր նը-
պատակի իրագործումը:

Ժողովուրդի անգիտակ մեծամասնու-
թիւնը երեւի կարմիր երազների ու-
կեանի մէջ հեշտօրէն ընկողմանած կ'ե-
րեւակայէին թէ ահա այս ամսին կամ
զալ տարի ազատութիւնը սաւառա-
թեւ ներս պիտի մտնէ. լուսաթաթախ
արշալոյսի երփներանգ, հրապուրիչ շո-
ղերով, բայց երբ տեսան որ փոքր գործ
չէ, խաղ ու հանաք չէ, որ բաւական
ժամանակ, տարիներ, եւ միեւնոյն ժա-
մանակ մեծաքանակ զոհեր է պահան-
ջում, այո՛, մեծամասնութիւնը հայե-
րից հիասթափուել սկսեցին, վարդա-
գոյն երազները սեւի փոխուեցան...

Զգո՛յ՛, պարոններ, զգո՛յ՛, յուսա-
հատութիւնը, դասալքութիւնը կը մեռ-
ցնէ ամեն կենսական խնդիր, ամեն
յառաջդիմութիւն. կը թողնէ ամէն
ծառ ու ծաղիկ, վերջապէս կը թմբե-
ցնէ ամէն կենդանութիւն: Չէ՞ որ
ծառի մը պտուղը ստանալու համար,
պէտք է մշակել նրան քանի մը տա-
րիներ ամենալաւ կերպով: Իսկ այդ կը
լինի կամբով, Զանքով եւ Յարատեւ-
ութեամբ:

Յուսահատութիւնը, ձեզ եմ ասում,
ձեզանից լւարճանքիւրը անտարակոյս
պատահած է ո՛ր եւ է ժամանակ, ձախող
դիպուածների. լա՛ւ ուրեմն, այդ ձա-
խող դէպքերի ծանրութեան ներքեւ
չընկճուելու համար ի՞նչ էք արել դուք:
միթէ միշտ մնացե՛լ այդ ձախողու-
թեան ազդեցութեան տակ. ի հարկէ
ոչ. ի՞նչ էք արել ուրեմն, աշխատել
էք, ճիգ ու ջանք էք արել, արիւն
քրտինք էք թափել կրկին ձեռք ձգելու
էդ նախկին դրութիւնը: Իսկ եթէ լի-
ովին առաջուայ բարեկարգ վիճակը չէք
ունեցել, բայց գոնէ ձախողութեան
մէջ չէք մնացել: Ինչո՞ւ, որովհետեւ
աշխատել էք:

Նոյնպէս եւ Հայ Յեղափոխութիւնը:
Երբոր մենք այսչափ զոհեր տուինք եւ
զեռ եւս պիտի տանք, նշանակում է
որ մենք աշխատում ենք դուրս գալ
ձախող դրութիւնից. բայց երբ յուսա-
հատուենք եւ երես դարձնենք Յեղա-
փոխութեան եւ յեղափոխականներին,
հաւատացէ՛ք որ իսպառ կը մեռնինք,
իսպառ կ'անհետանանք:

Քննադատել յեղափոխական այս կամ
այն գործերը, այս կամ այն անձնաւո-
րութիւնները, իրաւունք ունինք, իսկ
ձեռնթափ լինել Ս. Գործից, այդ մենք
չենք կարող. ով որ հայու արիւն ունի,
այդ չի կարող անել, աններելի յան-
ցանք է դա, յաւիտեական ամօթ եւ
նախատինք է դա:

Յոյները մօտաւորապէս 90 տարի աշ-
խատեցին. Բուլղարները 40-45 տարի,
Իռլանտիան հարիւրաւոր տարիներ է
որ աշխատում է. օրինակները բազմա-
թիւ են. մենք զեռ եւս 12-15 տարի
է որ գործնականապէս ցոյց տուինք
թէ հարազատ արիւն ունինք մեր ե-
րակներում, թէ հուժկու բազուկներ
ունինք բռնապետութեան դէմ կռուե-
լու. ցոյց տուինք թէ դարեւով դար-
բնված չղթան օղակ օղակ, մաս մաս
կոտորելու, ընդունակութիւնը ունինք:
Ի՞նչ. ուրեմն, յուսահատութիւնք քանի
մը անաղղ դէպքերի պատճառով. Ժի-
ծաղեցնե՛լ տանք մեր վրա ամբողջ
մարդկութիւնը, ծաղրի, թուք ու մուրի
առարկայ դառնանք աշխարհի առաջ,
ե՛տ քաշուինք, պախարակենք Յեղա-
փոխութիւնը, եւ այն էլ ինչո՞ւ, որով-
հետեւ մէկիս տունը քանդվեց, միւսի
խանութը թալանվեց, երրորդի եղբայրը
սպանվեց, չորրորդի որդին՝ կրկնում
եմ նորից. մի՛թէ չգիտէինք այդ ա-
ռաջուց:

Բացարձակապէս դաւաճանութիւն է
յուսահատութիւն եւ յուսահատական մրտ-
քեր քարոզել: Այո՛, եղան մեր մէջ
սխալ գործունէութիւններ, սխալ ուղ-
ղութիւններ նպատակին հասնելու հա-
մար. բայց եւ այնպէս այդ սխալներն
են որ մեզ իսկական ճանապարհի, ուղ-
ղութեան վրայ պիտի կանգնեցնեն:

Բնականապես ժամկետային է յառաջդիմութեանը. քննադատները լրջօրէն եւ անաչառ եւ միշտ քննադատները, բայց չի յուսահատուենք. ինչպէս ասինք, այդ աններեքի է ամէն մի հայու համար:

Ինչպէս յուսահատուենք, ինչպէս ետ քաշուենք: Միթէ մարդը կարող է ապրել առանց անուղի, հացի ու ջրի: Նոյնպէս էլ այժմ՝ հայը առանց Յեղափոխութեան չի կարող ապրել, չնչիւ, գոյութիւն ունենալ, վերջապէս արեւ ու լոյս տեսնել:

Կեանքը, ապրելը օր օրի յեղաշրջուել է նշանակում, ու՛ր որ չի կարող յեղաշրջուել, նա չէ կարող եւ ապրել, նա կ'անհետանայ:

Ուղեւորութեանս մէջ յոճախ պատահել եմ այն տեսակ մարդկանց, որոնք լքուած, ընկճուած, վհատած են երեւում: Մենք այդպէսներին այս ենք ասում, որ զգուշանան յեղափոխական ոգին մեռցնելէ, այս եւ այնտեղ, այս եւ այն դասակարգերի մէջ, մահաբեր լքուածներ յառաջ բերելէ: Թող լաւ համոզուեն այդ պարտնէրը որ հայը պիտի փրկվի, վաղ թէ անագին: Հայկական ինքնիշխանութեան ուշանալը իրաւունք չի տար յուսահատուելու, իրաւունք չի տար չլու Գեալուցութիւնը կրկին եւ կրկին տանելու:

Հազարաւոր զոհեր տուինք, ինչպէս մոռանանք դրանց: Հազարաւոր հայ գեղանի կոյսեր բռնաբարուեցան, ինչպէս տաններ այդ նախատինքը: Հազարաւոր հայ մանկտիներ ողջ ողջ խող-խողուեցան, ինչպէս համբերենք: Միթէ քա՛ր ենք, երկաթ, փայտ թէ՛ անբան անասուն:

Ո՛չ, մենք մարդ ենք, ուրեմն պէտք է գիտնանք թէ ինչպէս պէտք է ապրի մարդը: Միթէ առանց բարի, առանց գեղեցիկի եւ առանց ճշմարտութեան կարող է ապրել նա՞ ու՛ որ մարդը է: Ուրեմն դրանց հասնելու համար դիմենք Հայն'ր, միահամուռ դէպի նպատակը: Անցեալի փորձից բաւական խրատուեցանք, ընտրենք նպատակայարմար ուղին, որպէսզի օր առաջ նպատակէտը

հասնինք, օր առաջ յուսահատուողներին ցոյց տանք թէ իրենք չարաչար սխալված են:

Յուսահատուողներ, ինչ էք ուղում, թողնենք զր նորից թշնամին 500 տարիներ եւս բռնակալէ մեր կեանքի ու պատիւի վրայ, ծծէ՛ մեր երակները վերջին կաթիլ արեւնը, ծծէ մեր ոսկորների վերջին, մնացորդ ծուծը: Թողնենք:

Ուրեմն, մէկ կողմ քաշուին յուսահատները, նրանք մեղանից չեն, հայ չեն նրանց կեանքը թունաւորէ, նրանց չունչը՝ մահաբեր:

Ապրի՛ն անձնագործ անկեղծ, նուիրուած հայրենասէրները. նրանց կեանքն է որ արեւ կը տայ Հայուն, նրանց չունչն է որ լոյս կը տայ Հայուն, նրանց մահն է որ վերակենդանութեան առաւօտը պիտի բերէ Հայուն:

Փահիրէ, 3 սեպտ. Ն.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ, Պօլիս 5 Սեպտ.

Սահմանադրութեան վերաբնու-թեան խնդիրը չուտով երեւան պիտի գայ: Աներեւոյթ ձեւերը գործը յառաջ կը մղեն, բանդի բարձր շրջանակներ խնդրոյն արագ լուծման կը փափաքին: Ստեփան փաշայի ուսերուն վրայ բեռացին այս ծանրութիւնը իր ծերութեան օրերուն մէջ: Բուն խնդիրը Սահմանադրութեան ոգին մեռցնելու վրայ է, ժողովրդական ընտրութեան սկզբունքը եւ ազգային իրաւանց եւ առանձնաշնորհման շըրջանակը որքան կարելի է սեղմելով: Բացարձակ միապետական պետութեան մը մէջ սահմանադրական պետութեան մը մանրանկար օրինակը վտանգաւոր կը նկատուի, եւ վարակիչ կրնայ ըլլալ թուրք ժողովրդեան ազատ հովեր առնող

կնգուղս պահանջած եւ առնելուն պէս առանց բառ մը արտասանելու մօտակայ գետակին մէջ նետած էր, ապա իր բացատրութիւն յատնելով թէ ինչպէ՛ս այդ սահմանին մէջ գոյնուող հայերու արդիւնութեան է կնգուղ կրելը, որուն պատիժը առնուաղն երեք տարուան չղթայական աշխատութիւն է, ըսած էր: Են համակերպած էի իմ բաղդին եւ առանց բառ մը արտասանելու ճամբաս շարունակած իբր անպաշտպան խաղաղի բնութեան քմահաճոյքներուն եւ անտոյց՝ թէ ո՞ր կ'երթամ եւ ինչ արդիւններու պիտի հանդիպիմ ամեն քայլափոխի:

Գիւղաքաղաքի շուկայէն անցնելով հասած էինք՝ հայու սրճարան մը, որ միեւնոյն ժամանակ իբր պանդոկ պիտի ծառայէր. պիտի գիշերէինք հոն, յաջորդ օրը Ամասիա երթալու համար, առանց հանդիպելու Մարգուան, որ այդ միջոցին բորբոքած հրաբուխի մը կը նմանէր: Ետտ մը խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ եղած էին: Ծմաւունի վիպական պատահարները որ ձիջդ այդ միջոցներուն տեղի ունեցած էր, ամէնուն բերանն էին:

Սրճարանին մէջ որ իր կեդրոնական դիրքին պատճառաւ գրեթէ Հայրու առօրեայ յաճախավայրն էր, ի տես անծանօթի՝ գլուխ հաւաքուած բազմութիւնը հարցումներու տարափ մը կը թափէր վրաս. թէ ո՞վ էի, ո՞ր կ'երթայի ձեռք եւ այդպիսի վտանգաւոր ժամանակ. թէ անպատճառ պիտի ձերբակալէին զիս, երբ Ամասիա հասնէի,

մասին համար. ուստի պէտք է վտանգին առաջն առնել, Հայոց Սահմանադրութիւնը ոչնչացնել: Ստեփան փաշա որ վերէն եկող ներշնչումներու համակերպելէ խոյս առալու միջոց չունի, կը ջանայ զանոնք սքողել անմեղ երեւոյթ ու նեցող բացատրութիւններու տակ ու այնպէս ներկայացնել ազգին ներկայացուցիչներուն վերաբըմնելալ(՝) Սահմանադրութիւնը: Այս նախազգուշութեան պատճառը ժողովրդեան դժգոհութիւնը եւ զայն լոյթը զրգուելու վախն է: Կը վախցուի որ ժողովուրդը, գործին իսկութեան անտեղեակ եւ անոր միակ հեղինակ կարծելով մեր վարչական շրջանակներու վերաբերող անձեր, գրգռուի եւ տեղի ունենան դէպքեր սրոնք պալատին տհաճութեան եւ անհաճոյ հետեւանքներու պատճառ ըլլան: Այս վախը սակայն անտեղի կերեւի. ժողովուրդը եթէ չդիտեր, իր պարզ տրամաբանութեամբ կը կռահէ հովին որ տեղերէն փչելը, յետոյ՝ բնաւ տրամադիր չէ այսպիսի պատճառներով ի զուր տեղի տալ կառավարական նոր խտրութիւններու: Սահմանադրութեան վերաբնիչ յանձնաժողովը իր ծերունազարդ ատենապետով կրնայ հանգիստ ննջել գիշնները:

Պետական վարժարանները ընդունուելիք 25 հայ ուսանողներու խնդիրը որ սկզբունքով երկար ժամանակէ հետէ լուծուած էր, գործնականապէս ալ կարգադրուելու վրայ է վերջնականապէս: Տղայք հետզհետէ կընդունուին դպրոցները, սակայն այնքան դժուարութեամբ եւ յետաձգմամբ որ Պատ. Բարեբարանը կրնայ, առանց կա-

տակի, իր մէկ նոր յաղթանակը նկատել խնդրոյն կարգադրութիւնը:

«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Յ. Ղ. Չաչաք (Սերպիս). — Ինչպէս արտասահմանի ուրիշ կողմերու, նոյնպէս Սերպիսի մեր յարգելի բաժանորդները՝ մահա-բոսթով կարող են մեզ զրկել իրենց բաժնեգրիներն: Դուք ալ այդ միջոցին գիմնելու էք:

— Ու երբեք ազգ թերթիս միջոցաւ հրատարակել ուղղորդող պարտին իրենց նամակին հետ զրկել հրատարակութեան փոխարժէքը, որոյ քանակը կարող են որոշել լրագրիս ճակատը նշանակուած ծանուցումէն: Տարբեր կերպով վարուողները թող չցաւին երբ իրենց զբոյսը ազդել չի հրատարակուի:

Մ. Ս. Ռուսուք. — Ձեր ազդը ձեր ուղած կերպով չի հրատարակուել լուրջ պատճառներ ունենալով: Միայն ձեր բարի վկայութիւնը ձեր անձին համար բաւական չէ:

ԼՐԱՔԱՂ

Նոր-Դար կըսէ թէ նշանաւոր կովկասագէտ Տ. Աղեքսանդր Երիցեան այժմ կը պատրաստէ երկասիրութիւն մը «Հայերը Վրաստանում եւ Թիֆլիսում» խորագրով եւ հայերէն ու ռուսերէն լեզուներով: Գիրքը պիտի զարդատուի զանազան նկարներով, ձեւերով, կը գրքին պիտի կցէ նաեւ յաւելուած մը, որ վրացի, բիւզանդացի եւ արաբ պատգամագիրներէ բաղուածներ պիտի պարունակէ՝ Հայերուն եւ վրացիներուն յարաբերութեանց մասին:

— Հանրաժանօթ գրող Տ. Պերճ Պուշեանցի՝ որ Թիֆլիսի Ներսէս.

էի չափ դնել եռանդիս՝ նպատակէս չը չեղելու եւ անվտանգ հայրենի երկիրս հասնելու համար:

Չուտ հայկական էր սրճարանը ուր Տաճիկները չէին յաճախեր. գրեթէ իրիկունն ալ հոն անցուցինք նոյն ծանօթ դէմքերով, խօսելով յար գեղջկական եւ երկրագործական նիւթերու վրայ: Կ'աշխատէի խուսափել երբ ազգի եւ կառավարութեան խօսք կ'ըլլար, թէ եւ կային ոմանք որ բացորոշ կը յայտնէին իրենց դժգոհութիւնը կառավարութեան անարդար եւ քմահաճ ընթացքին դէմ: Այս գիւղաքաղաքն ալ իր բանտարկեալներն ունեցած էր ազգային խնդրոյն պատճառով: Բանտարկեալ երիտասարդներէն ոմանք աղատուած, իսկ այլք դեռ բանտի մէջ էին: Այդ արձակուած բանտարկեալներէն մին էր որուն հետ սակարկած էինք յաջորդ առաւօտուն կանուխ ճանապարհ ելլել Ամասիա երթալու համար. եւ իր ճարպիկութեան, բարի տրամադրութեանց եւ զիմաղծերու արտայայտութեան վրայ վստահ, կը յուսայի թէ լաւ ճանապարհորդութիւն մը պիտի կատարուի, եթէ կառավարական արգելքի մը չհանդիպէինք: Յուրաքանչեւ մեզմացած էր եւ ձեան ու բուքին յաջորդած էր գաղջ օդ մը եւ լուսապայծառ արեգակ մը, որ իր վերջալոյսի շողերով կը լուսաւորէր Մարգուանի գեղեցիկ դաշտավայրին սպիտակափառ ձիւնը:

Մ. Գեորգի (Շարունակելի)

եան վարժարանի ուսուցչութեան պաշտօնը թողեր է, տարեկան 600 ռուպլի թոշակ յատկացուած է նոյն վարժարանի հոգաբարձութեանն։

—Կաթողիկոսը մտադիր է իր իրաւասութեան ներքեւ գտնուող ռուսահայ դպրոցներու մէջ մտցնել գիւղատնտեսութեան վերաբերեալ ուսումներ։

—Սմբատ Եւսեպիոսի հայոց Բարեգործ. ընկերութեան ղեկեր է երկու հազար ռուպլի, զայն աւելցնելու համար «Արուսեան — Նազարեան» զրական մրցանակին դրամագլխին վրայ որ այսպէս 10000 ռ. ին կը հասնի։

—Ս. Սահակ Մեսրոպի տօնին օրը Էջմիածնի խումբ մը միաբաններ և ճեմարանի աշակերտներ ուխտի գնացեր են Օշական գիւղը Ս. Մեսրոպի շիրմին, ուր պատարագներ է Սահակ եպիսկոպոս և քարոզներ է Յովսէփ եպիսկոպոս. ներկայ էր բաւական հոծ բազմութիւն։

—Թիֆլիսցի Ալեկեան ընտանիքը յանձն առեր է հոգալ Գեորգեան ճեմարանի շրջանաւարտ այն սարկաւազներուն ծախքը, որոնք հետզհետէ ուսական համալսարանները պիտի ղրկուին։ Ասոնցմէ առաջինն եղած է Ներսէս սարկաւազ Տ. Միքայէլեանց որ Մոսկուա գնաց իրաւաբանութիւն ուսանելու։

—Կարինի բոլոր վարժարաններուն ուսուցիչներուն թիւն է 49, իսկ աշակերտներունը՝ աւելի քան 2000։

Տեղւոյն որբանոցի շէնքը անբաւական ըլլալով, Արծնեան վարժարանին կից ընդարձակ, քարուկիր և կրկնաբար շէնք մըն ալ կը կառուցուի հիմա որբերու համար։

—Տ. Ռէթէոս Պէրպէրեան, հիմնադիր—տնօրէն նոյնանուն վարժարանին, յիշեցնել վերադարձեր է Կ. Պոլիս։

—Աւստրիոյ հանգուցեալ կայսրուհին հոգւոյն համար Բերայի Սանթա-Մարիա եկեղեցիին մէջ կատարուած հանգստեան պաշտօնին Ս. Պատրիարքին կողմէն ներկայ գտնուել են Երէցեան Գեորգ եպիսկոպոս և ուրիշ երկու վարդապետներ։

—Չարսանճագի առաջն. տեղապահը կը տեղեկագրէ Պատրիարքարանի թէ Մկրտչական բողոքականները շատ մօտիկ ազգականներ կը պսակեն իրարու հետ (օրինակի համար այրի մը իր հանգուցեալ ամուսինին եղբոր հետ) իբր արաստովոր միջոց նորազանգներ շահելու։ Նաեւ չափահաս աղջիկներ, կիներ և երիտասարդներ մօրէ մեղք կը մկրտեն։

—Պաւառային Միացեալ վարժարանաց խնամակալութիւնը (նախկին Միացեալ ընկերութիւնը) հրաժարեր է դրամի չգոյութեան պատճառաւ, յայտնելով թէ այս տարի հարկ պիտի ըլլայ փակել վարժարանները։ Ս. Պատրիարքը կը ջա-

նայ համոզել խնամակալութիւնը թէ պէտք չէ ձեռնարկել ըլլալ, այլ պահել զոնք ամենէն կարօտ տեղերու վարժարանները, որոց համար Պատրիարքարանէն նպաստ մը պիտի յատկացուի։

—Սուլթանը հրամայել է որ գաւառացի նկարիչ, կահագործ, ատողձագործ եւն. այն հայ արհեստաւորներուն որոնք գործերու սակաւութեան պատճառով չեն կարող իրենց ապրուստը ճարել, գործ հայթայթուի պետական շինութիւններու մէջ։

—Թիֆլիսի մէջ գիտաւարութիւն կայ կովկասի շահերուն նըւիրուած թերթ մը հիմնելու որ պիտի հրատարակուի ուսերէն, հայերէն և վրացերէն լեզուներով։

—Էջմիածնի Սինոդը ամուսնաթողութեան նոր հրաման մըն ալ տուած է, խոտանան գիւղի բնակիչ Տիւրպէր Պապայեանը արտօնելով կրկին ամուսնանալ, որովհետեւ բժշկական քննութիւն մը հաստատել է թէ անոր այլը անկարող է։

—Էջմիածնի գաղի Սարգիս Բաժարեանց իր ուսումը Գերմանիոյ մէջ կատարելագործելու փափաք ունենալով, Սինոդը կովկասի կառավարչապետին միջոցաւ յիշեալին համար կեդր. կառավարութեանէն թոյլտուութիւն խնդրել է արտասահման երթալու։

—Կարինի առաջն. տեղապահ Ջաւէն Դ. վարդապետի պաշտօնավարութեան մասին գովեստով կը խօսուի։ Ժրաջան վարդապետը գիւղերն ալ անտես չընել և անձամբ կերթայ տեսնել և քննել առնոց բնակիչներուն վիճակը և իրենց պէտքերը, մինչդեռ ընդհանրապէս գաւառներու հոգեւոր պետերը միայն քաղաքներու ուշադրութիւն կընծայեն, արհամարհոտ մոռացութեան մը տալով հայ գիւղացին։

«ԵՂՐԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ
ՎՆԱՍՈՒԱԾ ՀԱՅԵՐՈՒՆ ԻԹՈՒՐԲԻԱ»

Այս օրեր լոյս տեսաւ այս ծանօթ ուսեղէն հաւաքածոյին երկրորդ տպագրութիւնը, բարեփոխուած և աւելի ճիշտացած։ Խրմբագիր Տ. Ջանչեանց յառաջաբանին մէջ կը յայտարարէ թէ ուսումնական ազդեցիկ մասը առանց բացառութեան իր ջերմ համակրութիւնը յայտնած է ձեռնարկին, որուն առաջին տպագրութեան գրած ընդունելութիւնը վերագրելի է այդ համակրութեան։ 4 ամսուան մէջ սպառած 3600 օրինակներուն զուտ շահն եղած է 24000 ռուպլի։

Նոր տպագրութեան մէջ աւելցուած են ընտիր և շահագրգիռ 42 նոր յօդուածներ, ձեռնհաս հայ, ուսու և ալլազգի հեղինակներէ գրուած։

Տ. Ջանչեանց որբանոց մը բանալու հարկաւոր գումարը դրեր է

Ս. Պատրիարքին տրամադրութեան տակ, իրեն թողելով որոշելորդանոցին յարմարագոյն տեղը։ Ս. Օրմանեան որոշել է Բալուի Քաղցրահայեաց վանքին մէջ բանալ նոր որբանոցը։

ԴԱՐՁՆԱԼ ԳԱՐԱԿԵՆՈՋՆԱՆ ԿՏԱԿԸ

Այս կտակի խնդիրը նոր և անակնկալ երեւոյթ մը ստացած է։ Փաստաբան Տ. Աւետիս Սուրենեան նամակ մը գրելով Ս. Պատրիարքին կը յայտնէ թէ որովհետեւ Շէրիաթը ամէն անհատի իրաւունք կուտայ հանրային կտակներու բռնաբարիչներուն դէմ դատ բանալու, ինք, Տ. Սուրենեան, կը ձեռնարկէ դիմել Շէրիի ձեռնհաս դատաւորին և հաստատել կտակին օրինաւորութիւնը Գարակէօզեան ժողովագրողներուն հանդէպ։

Գալով Աղզ. վարչութեան և Գարակէօզեան Գրիգորի միջև կատարուած իրաւախօսութեան, որով կտակը կը ջնջուի և ատոր փոխարէն Գարակէօզեանները 20,000 ռուպլ կը նուիրեն ազգին, Տ. Սուրենեան այդ իրաւախօսութիւնը ապօրէն և չեղեալ կը նկատէ տիրող օրէնքներու ուժով, որովհետեւ ազգ. վարչութիւնը, իբր ազգային գոյքերու մատակարար, ունէ օրինական հանգամանք չունի եղծանելու հանրային կտակ մը։ Ըստ Շէրիաթին «հանրութեան միահաղոյն իրաւունքը իր ձեռաց մէջ ունեցողը» միայն կարող է հանրային կտակներու մէջ փոփոխութիւն մտցնել, և այդ իրաւունքին տէրը, դարձեալ ըստ Շէրիաթին, միայն երկրին Օրէնսդիր իշխանութիւնն է։

Խառն ժողովը նկատառման արժանի չէ տեսնել այս նամակը։

ԱԼԼԱՀԸՆ ՔԵԼԱՄԸ

Իրաւունքը 68 ինճի նուսխէսին տէ՛ «Բրթէսթանլար» սերլէվհասըլա, «Վահագն» իմզասընը թաշըյան պիր շախս, աչըգտան աչըղա Ալլահըն քելաւընը տէյիլ իսէ, օլ քելաւըն շէրիֆի վաղ իթմէյէ ճէսարէթ իսէն զէվաթը զէմմէյլէմէք միւշքիւլաթըն տէրէօհտէ էյլէմիշ տիր։

Սիւլալմըզ Վահագնա տըր պիլզէ խապէր վէրսին, Ալլահըն քելաւըն հէր կիւն էրմէնի միլլէթի միզին հէր պիր քիլիսասընտա (Մայր եկեղեցիմիզտէ) օգո՛ւնմայօր մը, էօյլէ իսէ նէ՛ մազսէտլէ օգո՛ւնույօր։

Վահագն, գըսսաճա, պիլմէլի տիր քի էրմէնի միլլէթի տէնրյէր. ձէ պու քէլամ Ուլլահըն սէվմիշ վէ անըն ուղուրնա ֆէտաի հայաթ տախի էթմիշ տիր. վէ պիլզ օլ քէլամըն վաիլլէրի իլ։

Էյէր պիլզ, հայ աւետարանաւանլար՝ միլլէթիմիզին զիտտէսիլլէ սէվմիշ վէ սէվմէքտէ օլտուղը Ալլահըն քելաւընը՝ անկաշըլըր լի-

սանլարտա թէքէրըր, վէ օլքէլամըն մինտէրիճ օլտըզը հագիգա. թը թէպշիր վէ թէքիտ էտիօր իսէք՝ ՋԱՄԻՐ վէ ՏԻՆ ՀԻԻՐ-ԲԻՅԷԹԻ էսասը ալէմ սիբասընա մուղայլի՛ր մի հարէքէթ էտիօրըզ։

Պիլիմ վաղ էթտիլիմիլ քէլամ Ուլլահ մը՝ «էսքի» վէ «պայաթ» տըր, էօք իսէ պու քէլամըն ուսուլը թէպշիր մի «էսքի» վէ «պայաթ» կէօրիւնիօր. Պու Ալլահըն քէլամըն հի՛շ մի վաղ էթմէյէլիմ, վէ եախօտ նէ՛ էօլտա վաղ էտէլիմըի «Վահագն»ա ճէտիտ վէ թաղէ կէօրիւնսին։

Վահագն չո՛ւ նօգթալարը աչըղա վուրսա հիշ քէօթիւ իթմէզ։ Պիլզ, աւետարանական վաիլլէր, «թէքիգա» հասլ իթմէյօրըզ. թէքիգա վէ զարաղ վէ իֆթիբա վէ եալան վէ դուրուրիյէթ վէ զայ. իրհա կիւնա՛ս վէ ֆէնա թապիլթալար բէնչէսինտէն ինսան ճինսինի մուհաֆազա էթմէյէ միւղթէտիր օլան Ալլահըն մուհապպէթինին քէլամընը իլան էտիօրըզ. զիբա վաիլզ իշպու քէլամըն միւնատի վէ միւֆէսսիլի տիր. հէմ տախի պիլզ քէլամ ուլլահտա իրաէ՛ օլու նան ախլազը հասանէին հէր թէգատտիմէ էսաս վէ թարիֆ օլտըղընա ինանըըզ. պո՛ւնա՛ Վահագն տա ինանը՛ր մը։

Էվվէթ «Ալլահըն Աղիզ Գելաւընը» թիւրքլէրէ վէ քիւրտլէրէ տախի վաղ իսէն լէր վարտըր, լաքին պիլզ իսէ՛ պիլզէ աիտ օլան «գօյունլարը արայօրըզ»։ հէրքէս վազիֆէսինի թանըմալը եա՛։

Միլլէթիմիզէ «բէ՛ք պաշգա» տէրս վէրէն վար տըր, վէ պիլզ օնլարը ինճիտէճէք հիշ պիր շէյ տէմէյօրըզ վէ տէմէյէճէյիլ, անճազ վազիֆէմիզէ էմին օլմաղա չալըշըյօրըզ։

Միլլէթիմիզին «Էլիթմէյէ քուլաղը» վէ անկալմաղատա ֆիրասէթի վար տըր։

«Խայրխահանէ էտիլէն էմիլյէթին սուի իսթիմալը» նօգթասընա կէլինտիքտէ, վահագն՝ հանկի վաիլզի պու խուսուստա գապահաթը կէօրիւյօր իսէ՛ պուլուլուրսին, պիլզ հէֆիմիլտէ՛ Էվրօբա վէ Ամէրիգատա պիլզէ էմիլյէթ իտէն զէվաթըն ատրէսլէրինի քէնտիսինէ վէրմէյէ հաղըըզ, քէնտիսի քէնտի էլիլլէ եազըն, վէ հալը հազըզաթը իքի թարաֆը թէֆթիլ վէ թահզըգտան սօնկրա իլան էյլէսին, էօք իսէ ալ «թէֆրիգա» հասլ իտէն քէնտի օլաճաղընտան, պիլաւտէրանէ մուհապպէթէ տէվամ իտէլիմ տէյու նա սիհաթ իտէրէք, հագիգաթը մուհաֆազա էտէրիլ, վէ հէր նասըլ իսէ՛ հագիգաթտան զիտտէ տէ հիշ պիր շէյի սէվմէյօրըզ։

Հայկ Ե. Եւաթընեան

Վառնա 10 սեպտ.

ՐԵՃԱ

Բաղադրված ապօնելներով հին պիր գրամը էլան պորճարը կհան- տերմեմիշ օլարադ պիրի միւզայե- գայա տիւշար իտէյօրլար . չօգլա- րըն հիսապլարըն խուսուսի մէք- թուպլարէ պիւտիրմիշ օլտըղըմըզ կիպի , պիւա թէէլիւր պորճարընը իյֆա իթմէլէրի թէէլիտէն վէ խասսէթէն րէճա օլունուր :

ԷՎՐՈՐԱՆԸՆ ԱՍՔԷՐԻ ՎԷ
ՄԷՍԱՐԻՅԱԹԸ

Էվրոբա տէվէթլէրին գուվվէի ասքէրիյէսինտէն վէ մէսարիֆաթը հարպիյէսինտէն պահա իտէն վէ թալիւրգտա նէշր օլունան պիր պէնտ- տէն աթիտէքի մալիւմաթ իսթիւհ- սալ ու իսթիւրաճ օլունըմը տըր :

Բուսիւնըն սիւհալ ալթընտա 2,392,327 ասքէրի վար , վէ մու- հարէպէտէ 6,000,000 ասքէր չը- դարապիւր : Մէսարիֆաթը աս- քէրիյէսի 43 1/2 միլիոն ինկիլիզ լիրասը սէնէտէ . քէզա տէվէթին պորճարընա սէնէվի վէրիլէն ֆաիզ 42 3/4 միլիոն ինկիլիզ լիրասը :

Ալմանիա մուհարէպէտէ 3,093,500 ասքէր չըդարապիւր . հիւքիւմէ- թին պորճարը 385 1/2 միլիոն ին- կիլիզ լիրասը , սէնէվի մէսարի- ֆաթը ասքէրիյէսի 656 1/2 մի- լիոն ինկիլ , լիրասը , (պունուն 27 միլիոնը ֆայիզէ) :

Ֆրանսա մուհարէպէտէ հանասընտա 4,190,000 ասքէր չըդարապիւր : Պորճը 1,265,748,804 ինկիլ . լիրասը , Մէ- սարիֆաթը ասքէրիյէ վէ պահրի- յէսի 36 1/2 միլիոն ինկիլ . լիրասը վէ ֆայիզ իշիւն 52 միլիոն լիրա :

Աւստրիա-Հունգարիա մուհարէ- պէտէ 1,813,414 ասքէր չըդարա- պիւր . տէվէթին պորճը 545 մի- լիոնտան զիյատէ . սէնէտէ 26 1/2 միլիոն ինկիլ . լիրասը ֆայիզէ վէ 12 3/4 միլիոն ասքէրէ վէ տէնիզէ սարֆ իտէր :

Իթալիա (րէտիֆի իլէ պէրա- պէր) 2,852,323 ասքէր չըդարապիւր : տէվէթին պորճը 449 1/2 ինկիլ . լիրասը . Մէսարիֆաթը ասքէրի- յէ վէ պահրիյէ 16 միլիոն վէ ֆա- յիզէ 23 միլիոն ինկիլ . լիրասը թէ- տիյէ իտէր :

Տէվէթլէրին մէգքիւր պորճա- րը մուհարէպէտէ վէ ասքէրի հա- զըրըզլար սէպէպի իլէ հասըլ օլ- մուշ օլմաղէ , էօտէտիքլէրի ֆա- յիզլէր տախի մէսարիֆաթը աս- քէրիյէտէն մատուտ տըր :

ՏԱԽԻԼԻՅԷ

—Յէլսամ . Բրէնս հազրէթլէրի տիւն սապահ սաաթ 7 տէ թըրէնի մախսուսլէ շէհրիմիզ սթասիօնընա մուվասէլէթ իտուպ , տօղրուճա էվքսինօկրատ քէօշկիւնէ աղիմէթ իթմիշ տիր :

—Պուկար հարպիյէ նէզարէ-

թինին թէնսիպի իւզրէ , Սօֆիատա ասքէրի պիր կազէթա նէշր օլըն- մագ իշիւն մէգքիւր նէզարէթտէն 3549 ֆրանք թախսիս օլընմարընա իւքազը Բրէնսի իլէ միւսաատէ օ- լընմըշ տըր :

ԿԻՐԻՏ

Օտէսատան 25 զապիթ վէ 707 ասքէր եէնիտէն կիրիտէ կիթմէք իշիւն հարէքէթ իթտիլէր :

Ալմանիա վէ Աւստրիա տէվէթ- լէրի կիրիտ մէսէլէսինէ դարըշ- մայաճազլարընը վէ Սուլթանըն դարըշ տուրմասընա գուվվէթ վէր- մէյէճէքլէրինի Սթ . Ռէյքրը պիւ- տիրմիշ տիր :

Սիւպուս . 10 տա Գանտիա իս- լամլարընտան 1000 քիշի սիւհա- լարընը թէսլիմ իթտիլէր . 11 տէ ասըլար ինկիլիզ ասքէրլէրի իւզէ- րինէ աթէշ իթմիշլէր :

Աւստրիանըն Լէսթօլտ վաբօրը կիրիտէ կէլտի :

Պապը Ալի քէնտի էլլիլէրինէ թալիմաթ վէրմիշ քի , Գանտիա միւհարիմլէրինին Թըրիքօլիյէ կէօն- տէրիլմէսի խուսուսընտա տիկէր տէվէթլէր ինկիլիթէրայա թէվա- սիւթ իթսիլէր վէ խրիսթիյան- լարըն տախի սիւհալալը ալընսըն :

Ալման Ռէյքրըն սօն թէլէկ- րաֆընա պիւնան , ինկիլիզ , Ֆը- րանսըզ , Բուսիա վէ իթալիա տէվէթլէրի կիրիտին թէսքիւնի ի- շիւն 24 սաաթ զարֆընտա միւթ- թէֆիզէն պիր բլան իմլալայա- ճագլար . վէ պու բլանը Սուլթա- նա դապուլ իթտիլմէք իշիւն պիր իւլթիմաթօմ վէրէճէքլէր , վէ հարպ վաբօրլարընը Չանագգալէյէ վէ իգլթիզա իտէր իսէ տահա իլէրի- յէ կէօնտէրմէկէ ասլա թէրէտտիւտ իթմէյէճէքլէր իմիշ :

ՄԻԻԹԷՆԵՎ ՎԻԷ

—Սթանպօլտա ինչա օլընմըշ օ- լան եէնի Պուկար քիլիսէսինին թագտիս ալինի միւնասէպէթի իլէ Սթանպօլտա թէճէմմիւ օլընան Պուկար Եպիսկոպոսլարընա Սուլ- թան պէր վէճհի աթի նիշանլար վէրմիշ տիր :

Գեր . Էքզարքա լիյազաք նի- շանը վէ վարնա , վրացա վէ Պի- թօք մէթրօքօլիտլէրինէ վէ Բրէնս Պօրիսին միւտէրիսի վասիլ վար- դապիտէ իքիւնի օսմանիյէ նիշան- լարը . վէ Լօֆչա , Սիւվէն , Նէվ- րօքօք վէ վէլէցի մէթրօքօլիտլէ- րինէ իքիւնի մէճիտիյէ նիշանլարը իհտա օլընմըշ տըր :

—Կէլէն կիւն Սթանս Ռէյքրը պիւտիրմիշ տիր քի Չին իմբէրա- թօրը վէֆաթ իթմիշ վէ բայթալա- թը օլան Բէքին շէհրին գաբու- լարը դաբանմըշ . պու պապտէ թաֆսիլաթ հօգ ըտը :

Բէքիւնտէն ախրէն շէքիլէն պիր թէլէկրաֆնամէյէ պիւնան , իմբէ-

րաթօրըն պիր ֆէրմանը մուհի- պինճէ , պունտան սօնրա իտարէի հիւքիւմէթ իմբէրաթօրըն վալի- տէսինէ իհալէ օլընմըշ :

Իմբէրաթօրըն միւսթէշարը գաշ- մըշ տըր . վէ Լի Հանկ Չանկըն մէմուրիյէթինէ թալին օլընաճաղը մէմուլ օլընմըշ :

—Բօլիք . Գօրէսըն պէյանընա կէօրէ , անարշիսթլէրէ գարըշը լա- զըմ կէլէն թէտպիլլէրի էլէ ալմագ խուսուսընտա իթալիանըն թէք- լիֆի հէր տէվէթլէրտէն դապուլ օլընմըշ օլարագ , պու մագսէտլէ պէյն էթ տիւվէլ պիր գօնֆէրանսըն պիւա թէէլիւր թէճէմմիւ օլընմասը պապընտա իթալիա տէվէթի րէս- մէն տալթիւնամէլէր կէօնտէրէճէք տիր :

—Չուիցերիա հիւքիւմէթի ա- նարշիսթլէրտէն 36 քիշի մէմա- լիքիւնտէն տիշարը չըգարմագ վէ տիկէր . անարշիսթլէրի տըգգաթ ու նէզարէթ ալթընա ալմագ իշիւն գարարը գաթի վէրմիշ տիր :

—Բարիստէ նէշր օլունան Լա Լանթիւն կազէթասը մէպուս Ս . Բօլիյէյէ գարըշ պիր պէնտ եազ- մըշ օլտըղընտան , Ս . Բօլիլէնին զէվճէսի մէգքիւր կազէթանըն ի- տարէլսանէսինէ կիտուպ , մուհար- լիր Ս . Օլիվիէի գարնընտան վուր- մուշ վէ աղըրճա եարէլէմիշ տիր :

—Տրէյֆիւսին տալա քեաղըտ- լարընը թէտքըզ իտէն գօմիսիօն- տա տալանըն եէնիտէն պագըլմասը իշիւն իթթիֆագը արա հասըլ օլ- մամըշ տըր : Մէճիլիսի վիւքէլանըն բազար իրթէսի կիւնիւ թէճէմմիւ օլընմասը մուգարըրէր տիր . Բա- րիստէ պուլընմայան նաղըրլար տախի մէգքիւր կիւն իշիւն չաղը- րըլտըրլար :

Օպուրվիւր կազէթասը էսթէր- հաղիւնին Լօնտրատա պուլընտըղընը եաղմըշ վէ տէմիշ տիր քի , Տրէյ- ֆիւսին մահքիւմիյէթինէ սէպէպ օլան պօրտաղօյը էսթէրհաղի քէն- տիսի եաղմըշ օլտըղընը իթիւրաֆ իտէյօր : վէ քէզա «Տ» իմզասընը հալի տիկէր քեաղըտը Տրէյֆիւս եաղմըշ օլմայուպ , Տօլֆիւսին եաղ- մըշ օլտըղընը վէ մէրգուճ Տօլֆիւս իսէ Նիցա դալէսինին բլանլարընը տէ Ալմանիա աքալէ միլիթիլինէ վէրմիշ պուլընտըղընը ալըղա չը- դարմագտա վէ Տրէյֆիւսին պու իշիլէրտէ մէտիալի օլմատըղընը սէօյլէմէքտէ իմիշ :

Գօլօնէլ Բիգար ասքէր հապս- հանէսինէ թէվլըքի օլընտը :

—Ինկիլիզ-Մըսըր ասքէրլէրի շէտիտ պիր մուհարէպէտէն սօնրա Գիտօրֆը տախի ալտըլար : Ժէնէ- րալ Գիլիլէր . Չաշօտատա , Գօ- պաթտա վէ Ուզանիտէ մուհաֆըզ- լար պըրագուպ , Օմտուրմանա կիթ- միշ տիր :

—Չինտէ անվալ բէք գարըշըզ օլուպ , պիր ինկիլիզ զըրհըսը թագուլա կիթտի :

ՉԱԽԻՐԷ ԲԻԱՑԱՍՐ

Վառնա . 16 Սեպտեմբեր
Պուրսայ
Վալուն , լիպրա 55-58 հէք 9 . 10-9 . 80 ֆր
Արապա , 55-60 հէքթ . 9-12,
Արապ
Լիպրա 42-50 հէքթ . 5-5 . 80 ֆր :
Ֆասուլիս
100 օգ . 15-21 ֆր . մալընա կէօրէ :
Եուրաթ
Արապա 20-25 . ֆիյաթ 4-4 . 40 ֆր .
Տարր
Արապա 5-6 . լիպրա 58-60 . ֆի . 4 . 60-5 .
Կիւնտէ 300-350 արապա վէ 8-10
վալօն պուզտայ , 100-120 արապա
արքա կէլմէքտէ տիր :
Ֆասուլիս 70-80 արապա :
Արապա մուամէլէսի նաբօլէօն 21 ֆր .
հիսապը իլէ :

ԱԶԴ

ՏՕՔԹ . Մ . ՎԱՐԴԱՆԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել իր Յարգոյ
Յաճախողաց և Հասարակութեան
որ իր բնակարանը փոխադրած է
Սեպտեմբեր 1 էն սկսեալ , անտու-
ռաց վերատեսուչ Պր . Մարքօֆին
տունը , Չորրորդ թաղ , Թաշ-Եօլիի
սկիզբը , Սապօրսքա փողոց : Կը
դարմանէ ամէն տեսակ հիւանդու-
թիւններ , մասնաւորապէս ներքին ,
կանանց , տղայոց և ծննդական
գործարանաց : Կը կատարէ ման-
կաբարձութեան ամեն տեսակ գոր-
ծողութիւններ : Կ'ընդունի նաև
տարեկան բաժանորդագրութիւն :

ՕՐԵՆՔ

ԱՐՀԵՍՏԱԿՈՐԱՑ

ԲԱՐԻՈՔՄԱՆ

Արսասպիալ
Պաշտօնական լրագրի 20 ռդ . տար-
ուան 30 ռդ . (1898 Փետր . 9 ի)
համարէն :

Թարգմանեց
ԱՐԱՄ Մ . ԴԱԽԻԹԵԱՆ

Կը ծախուի Տ . Սարգիս Կարա-
պետեանի մօտ , մօպիլիսթ ի Ռուս-
ճուք :

ԿՈՐՍՈՒԱԾ

Ով որ գիտէ փոքր Արմանցի
Խաչատուր Պետրոսեան անուն 21
տարեկան երիտասարդին ուր գըտ-
նուիլը , թող հաճի զրել Պուրկազ
իսքէլէ պաշի , թիւ 12 , Երզնկացի
Միքայելին սրճարանը :

ԱԶԴ

Շապին-Գարահիսարի Չըրտախ
գիւղացի Դանիէլ Խօճիկեան անուն
40 ամեայ ազգայինը , 14 տարի
առաջ հայրենիքէն հեռացած՝ 9
տարի առաջ Պուրէշի մէջ շաքա-
րագործութեամբ կ'գրադէր : Ով
որ գիտէ պիս անձին հիմա ուր
գտնուիլը , թող հաճի իմացնել
«Իրաւունք» ի խմբագրութեան :

Отговорникъ М. Сконовъ
Печатница „Взаимность“—Варна